

1923 թ. Լոզանի Համաձայնագիրը Ի նպաստ Հայութեան

89 տարիներ առաջ այս օրը, Յուլիս 24, 1923 թուականին, Հայ ժողովուրդը սուգի մէջ էր, Հայ ժողովուրդը իր ամէնէն տխուր օրերը կապրեր, Հայ ժողովուրդի համար Յուլիս 24, 1923 թուականը տխրահոշակ թուական մէն էր. մինչդէռ այսօր, 2012 -ին, միեւնոյն օրը, ուրախութեան օր է հայութեան համար, յաղթանակի օր է հայութեան համար, եւ այդպէս ալ պէտք է հռչակենք. այդ գիտակցութենէն մէկնելով, Արեւմտեան Հայաստանի Պաշտպանութեան Խորհուրդը, պատրաստ է որեւէ տեղ, որեւէ երկրի մէջ, նամանաւանդ Անքարայի մէջ, եւ հեռատեսիլի ուղիղ եթերով, բանաւէճ ունենալու Թուրքիոյ պետական եւ դիւանագիտական շրջանակներու հետ, Լոզանի դաշնագրի առնչութեամբ. ահաւասիկ բաց հրաւեր ձեզ Թուրքիոյ յիսորտացողներ:

Սիրելի Հայրենակիցներ, Լոզանի համաձայնագրի ստորագրութեամբ, հայութիւնը աշխարհով մէկ, սփիւռքի թէ Հայաստանի մէջ, հաւատով հաւատացին եւ համոզուեցան թէ, Հայոց քանի մը հազար տարուայ երկիրը վերջնականապէս կորսնցուցին, եւ թէ չեղեալ եղաւ Սերի Խաղաղութեան Դաշնագիրը եւ թէ չեղեալ եղաւ նոյնիսկ Նախագահ Ուիլսոնի իրաւարար վճռագրով սահմանագիծը Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ, եւ այդ համոզումը այնքան խարսխուեցաւ հայ ժողովուրդի հոգիներուն մէջ, որ նոյնիսկ մեր մտաւորականները սկսան հաստատել զայն.

Սիրելի Հայրենակիցներ, թէեւ նոյն այս բեմէն, ինչպէս նաեւ քանիցս անգամներ թերթով տեղեակ պահած ենք հայ ժողովուրդին Լոզանի դաշնագրի մանրամասնութիւններուն մասին, սակայն մեր մէջ այնքան խորացած է այն համոզումը թէ, Լոզանով վերջակէտը դրին Արեւմտեան Հայաստանի հողերուն, որ օր մըն ալ բարձր դիրքի վրայ եղած քաղաքական հայ անձնաւորութիւն մը, հոս, Լոս Անճըլըսի մէջ, կ'ըսեր, « Վազ անցէք Արեւմտեան Հայաստանէն, ան վերջացած է, պէտք չէ այլեւս մերը հաշուէք». վայն եկեր մեզ ով հայ ժողովուրդ, եթէ այս թունաւոր մտածումը մեր յաջորդ սերունդին անցնի, այն ատէն Կոմիտասը իր գերազմանէն պիտի ըսէ «ՈՎ ԻՐ ԵՐԿԻՐ ՄՈՒԱՆԱՅ ԶՈՒԽՏ ԱԶՔԵՐՈՎ ԿՈՒՐԱՆԱՅ»:

Սիրելի Հայրենակիցներ, 1920 – 1923 թուականներու ընթացքին եղած պատմական իրողութիւններուն վերաբերեալ պիտի ուզէի

ձեզ հետ միասին բաժնել, քննել հասնելով մինչեւ Լոզանի Համաձայնագիրը:

Ուրեմն, Ապրիլ 18– 26, 1920 թուականին, Իտալիոյ՝ Սան Ռեմո քաղաքին մէջ տեղի կունենաէին բանակցութիւններ, Մէծն Պրիտանիոյ, Ֆրանսայի եւ Իտալիոյ միջեւ, այսինքն Դաշնակից երկիրներու Գլխաւոր խորհուրդին. այդ ժողովին կը գրուէր դաշնագրի մը բնագիրը Դաշնակից երկիրներու եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ, որը հետագային ստորագրուեցաւ եւ կոչուեցաւ Սելրի խաղաղութեան դաշնագիր. . երբ այդ ժողովը տակաւին կը շարունակուէր, Ապրիլ 23-ին, Միացեալ Նահանգները կը ճանչնար Հայաստանի Անկախութիւնը որու տարածքին մաս կը կազմէր Կարսի մարզը, այսինքն Կարս, Իգդիր եւ Արտահանը. . այս ճանաչմամբ, Դաշնակից երկիրները առաւել պատճառ գտան իրենց վրայէն թօթափելու Հայ-Թրքական հարցը. առ այդ, հետագային ստորագրուելիք դաշնագրի բնագիրը անմիջապէս ամբողջացուցին գրելով 433 յօդուածներ եւ յլեցին զայն Օսմանեան Կայսրութեան, որուն վրայ ստորգրեց Օսմանեան Կայսրութեան Սուլթանը. . այդ բնագրի 88րդ յօդուածով Թուրքիան կը ճանչնար Հայաստանի անկախութիւնը, իսկ 89րդ յօդուածով Թուրքիան կը համաձայնէր Նախագահ Ուտրօ Ուիլսընին յանձնել Իրաւարարութիւնը սահմանագիծ հաստատելու Հայաստանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ. . եւ գրաւոր կ'ըսէր, «Մենք կ'ընդունինք որեւէ վճռագիր որ պիտի արձակէ Նախագահ Ուիլսընը մեր եւ Հայաստանի միջեւ սահմանագիծ հաստատելու, ապառազմականացած գօտի հաստատելու եւ ծովային ելք տալու պարագային Հայաստանին» . ուրեմն իրաւարարութեան յանձնելու այդ համաձայնութեան վրայ ստորագրելը, «ԶԻԶՈՒՄ» COMPROMISE կը կոչուի, իսկ զիչումը, երկիրներու վաւերացման կամ հաստատման կարիքը չունի. . Զիչումը սիրելի հայրենակիցներ միջազգային օրէնքով ըսել է : « Համաձայնութիւն երկու կամ աւելի երկիրներուն միջեւ , իրենց անհամաձայնութիւնները խաղաղութեամբ լուծելու համար իրաւարարութեան կը դիմէն, եւ այդ զիչումի համաձայնագիրը պէտք է ստորագրուի այն անհատի կողմէն , որը իրաւունքն ու կարողութիւնը ունի համաձայնութիւն կնքելու եւ գործադրելու զայն»:

Իսկ ովքեր են այդ իրաւունքն ու կարողութիւն ունեցողները? Անոնք ենք որոնք Ի պաշտօնէ կստորագրէն, այսինքն, Երկրի

ղեկավարը, կառավարութեան ղեկավարը եւ արտաքին գործոց նախարարը, համաձայն «**Վիեաննայի Համագումար ստորագրուած Մայիս 23, 1969 թթ. երկրորդ բաժին , յօդուած 7-2**»:

ուրեմն ստորագրուած այդ զիշումի հիման վրայ, դաշնակից երկիրներու գերագոյն խորհուրդը Ապրիլ 26, 1920 թուականին դիմեց Նախագահ Ուիլսընին, որ իրավարարութեամբ, սահմանագիծ հաստատէ Հայաստանի եւ Օսմանեան կայրութեան հողատարածքներու միջեւ, եւ այդ դիմումին որպէս պատասխան, Նախագահ Ուիլսընը , գրաւոր իր համաձայնութիւնը յայտնեց իրավարարի պաշտօնը ստանձնելու Մայիս 17, 1920 թուականին, այսինքն Սելի Խաղաղութեան Դաշնագրի ստորագրութիւնէն մօտաւորապէս երեք ամիսներ առաջ. իսկ իրավարար վճռագիրը՝ Նախագահ Ուիլսընը արձակեց Նոյեմբեր 22, 1920 թուականին. հիմա տեսնենք թէ, ինչ կը նշանակէ իրավարարութիւն? Ինչքան է իր ունեցած ուժն ու կարողութիւնը միջազգային օրէնքով? Այդ կրնանք տեսնել միջազգային հետեւեալ օրէնքներուն մէջ: «**« միջազգային երկու օրէնքները, ձեր մօտ եղած յայտագրի առաջին էջին վրայ հայերէնով գրուած են»»»»**

Հէկի համագումար ստորագրուած Հոկտեմբեր 18, 1907 թուականին-- Յօդուած 81

The award duly pronounced and notified to the agents of the parties, settles the dispute definitively and without appeal:

ՄԱԿ-ի համագումար ստորագրուած Նիւ Եորքի մէջ Յունիս 10, 1958 թ. Յօդուած 3:

Each contracting state recognize arbitral awards as binding and enforce them:

Սիրելի հայրենակիցներ, Նախագահ Ուիլսընի իրավարար վճռագրով, արձակուած Նոյեմբեր 22, 1920 թուականին , հայ ժողովուրդին յանձնեց, այսինքն Հայաստանին յատկացուց, Պիթլիսի, Վանի, Էրզրումի եւ Տրապիզոնի շրջաններէն, 40,000 քառ. մղոն հողատարածք, եւ վերը արդէն յիշեցի թէ միջազգային օրէնքներով, այդ իրավարար վճռագիրը,

անփոփոխելի է, վերջնական է եւ անքննելի:

Ուրեմն ինչպէս կը նկատենք, Նախագահ Ուիլսոնի Իրաւարար վճռագրի թուականէն անցած էր արդէն ճիշդ երկու տարիներ՝ այսինքն Նոյեմբեր 20, 1922 թուականին, բանակցութիւնները կ'սկսէին Մուսթաֆա Քեմալի կառավարութեան եւ Դաշնակից երկիրներուն միջեւ, մինչ Լոզանի համաձայնագրի ստորագրուիլը Յուլիս 24, 1923 թթ. այդ ութը ամիսներուն ընթացքին, տասնեակներով անգամներ Աւետիս Ահարոնեան կը շրջեր Լոնտոնի, Փարիզի եւ Ռոմայի միջեւ հանդիպելով իրենց արտաքին գործերու նախարարներուն հետ, որ ընդունին Հայաստանն ալ մասնակցի գալիք համաձայնագրի խորհուրդակցութիւններուն, սակայն ամբողջը ապարդիւն էր, նոյնիսկ անգամներէն մէկուն, Լորտ Քարզընը, մերժեց հանդիպիլ Աւետիս Ահարոնեանին, ինչու?, որովհետեւ Հայաստանը անկախ երկիր չէր, եւ Աւետիս Ահարոնեանն ալ այլեւս անկախ երկիր չէր ներկայացներ. եւ այդ ալ Լորտ Քարզընը հանդիպումներէն մէկուն ընթացքին ըսաւ Աւետիս Ահարոնեանի, թէ «« Հայաստանը կորսնցուց իր անկախ երկրի կարգաւիճակը, »».. ահաւսկ կը տեսնենք թէ Լոզանի Համաձայնագիրը ստորագրելէն առաջ, արդէն Մէծն Պրիտանիան չէր ճանչնար հայաստանը որպէս անկախ երկիր.. այդ ինքնին կը նշանակէ, որ հայաստանը այլեւս, համաձայնագրին մասնակցելու իրաւունքը կորսնցուց, ,եւ երբ երկիր մը ներկայ չէ որեւէ համաձայնագրի կամ դաշնագրի մը ստորագրութեան ժամանակ, այդ պարագային երրորդ երկիր կը կոչուի. ուրեմն տեսնենք թէ ինչ ըսել է երրորդ երկիր: -

“third state” means a state not a party to the treaty:

«Երրորդ Երկիր» կը նշանակէ երկիր որ մաս չի կազմեր դաշնագրին:

Վիեննայի Համագումար ստորագրուած Մայիս 23, 1969 թթ յօդուած 2.Ի

Ուրեմն նայինք թէ, այս պարագային ինչ պիտի ըլլայ երրորդ՝ «բացակայ» երկրի իրաւունքներն ու պարտաւորութիւնները: Դաշնագիր մը, ոչ իրաւունք եւ ոչ ալ պարտաւորութիւններ կրնայ յառաջացնել երրորդ երկրին համար, առանց իր հաւանութեան

A treaty does not create either obligations or rights for a third party without its consent: «Վիեննայի համադրումար, չորրորդ բաժին, յօդուած 34»

Սիրելի Հայրենակիցներ, որել համաձայնագիր կը ճանչցուի իր բնագրով, իր «թէքսթով», իսկ եթէ կցուած այլ փաստաթուղթեր կան, այդ պէտք է գրուի համաձայնագրի բնագրին մէջ եւ ապա երկիրները իրենց կնիքն ու ստորագրութիւնը դնեն. այդպէս է պարագան նաեւ Լոզանի համաձայնագրին, իր 143 յօդուածներուն հետ կցուած է նաեւ Թուրքիոյ քարտեզը, որը մաս կը կազմէ համաձայնագրին.

Սիրելի Հայրենակիցներ, դաշնագիր կը նշանակէ:
Համաձայնագիր ստորագրուած երկու երկիրներուն կողմէն որը կը կոչուի «երկկողմանի», կամ բազմաթիւ երկիրներու միջեւ, որը կը կոչուի «բազմակողմանի» դաշնագիր:
Իսկ երկիր կը նշանակէ: «Ա» որ ունի մնայուն ժողովուրդ, «Բ» որ ունի հստակ հողատարածք, «Գ» որ ունի կառավարութիւն, «Դ» որ իրաւունքն ու կարողութիւնը ունի այլ երկիրներուն հետ դաշնագիր ստորագրելու: Իսկ Հայաստանը այդ չորս տուուեալներէն որել մէկը չուներ Դեկտեմբեր 2, 1920 թուականէն ի վեր, առ այդ երկիր չէր, երկիր չէր ճանչցուեր միջազգային վերոյիշեալ օրէնքներուն համաձայն. որպէս այդպիսին Հայաստանը «ներկայ չէր Լոզանի համաձայնագրին, Հայաստանը չ'ստորագրեց զայն, Հայաստանը որել երկրի իրաւասութիւն կամ լիազօրութիւն չէր տուած իրեն ներկայացնելու համար.»» այսինքն Լոզանի համաձայնագիրը ոչ իրաւունք եւ ոչ ալ պարտաւորութիւններ դրաւ Հայաստանի վրայ. համաձայն վերոյիշեալ բոլոր միջազգային օրէնքներուն:

Սիրելի Հայրենակիցներ, հիմա կուզանք ձեզ հետ միասին մէկ առ մէկ կետերով փաստելու, որ Լոզանի համաձայնագիրը, հարիւր տոկոսով Ի նպաստ Հայաստանին եւ Հայութեան էր:

Ուրեմն Առաջին: Լոզանի համաձայնագիրը ստորագրուեցաւ Դաշնակից երկիրներու եւ Մուստաֆա Քեմալի Կառավարութեան միջեւ. մինչ Սելի Խաղաղութեան Դաշնագիրը ստորագրուեցաւ Դաշնակից երկիրներու եւ Օսմանեան Կայսրութեան միջեւ. ուրեմն Մուստաֆա քեմալի կառավարութիւնը օրինաւոր ժառանգորդն էր

Օսմանեան Կառաւարութեան. ուստի ժառանգորդ կառաւարութիւնը իրաւասու է չեղեալ համարելու իրեն նախորդող Կառաւարութեան կողմէն ստորագրուած բոլոր դաշնագիրները բացի այն, ինչ որ կը վերաբերի հողատարածքներուն եւ երկրի սահմաններուն.

«Համաձայն Վիեննայի համագումարին ստորագրուած Օգոստոս 23, 1978 թուականին». այդ կը նշանակէ Լոզանի համաձայնագրով Թուրքիոյ սահմանները Հայաստանին հետ չէին կրնար փոփոխութեան ենթարկուիլ, այսինքն ինչ որ Նախագահ Ուիլսընի իրաւարար վճռագրով հաստատուած էր, կը մնար անփոփոխ:

Երկրորդ : 1923 թուականին Հայաստանը երկիր չէր, Հայաստանը չի մասնակցեցաւ Լոզնի ժողովներուն, Հայաստանը չ'ստորագրեց համաձայնագիրը եւ Հայաստանը այլ երկրի մը լիազորութիւն չտուաւ իր փոխարէն ստորագրելու. այդ կը նշանակէ Լոզանի համաձայնագիրը որեւէ պարտաւորութիւն չդրաւ Հայաստանին վրայ. իսկ այդ իր կարգին կը նշանակէ Նախագահ Ուիլսընի իրաւարար վճռագրով արձակուած Նոյեմբեր 22, 1920 թուականին, Հայաստանի եւ Օսմանեան Կայսրութեան հողատարածքներու միջեւ սահմանագիծը մնաց անփոփոխ:

Երրորդ: Յօդուած 2.1 եւ 2.2 Լոզանի համաձայնագրով, Թուրքիան ճշտեց իր սահմանները Պուլկարիոյ եւ Յուանաստանի հետ. իսկ Յօդուած 3.1 եւ 3.2 –ով , Թուրքիան ճշտեց իր սահմանները Սուրիոյ եւ Իրաքի հետ. իսկ Հայաստանի անունն իսկ գոյութիւն չունի Լոզանի համաձայնագրի բնագրին մէջ, մինչդէռ, Նախագահ Ուիլսընի իրաւարար վճռագրով հայաստանին յատկացուած Պիթլիս, Վան, Էրզրում եւ Տրապիզոնը, սոյն համաձայնգրին կցուած քարտեզով Թուրքիոյ հողատարածքին մաս կը կազմէ. առ այդ, նոյն ինքնին Լոզանի **Չորրորդ յօդուածը կըսէ:-**

(In case of divergence between the text and the map, the text will prevail).

Այս յօդուածի հայերէնը ձեր մօտ եղած յայտագրի վերջին էջին վրայ գրուած է: Համաձայն այս յօդուածին Պիթլիս, Վան, Էրզրում եւ Տրապիզոն Թրքական հողատարածքին մաս չէն կազմեր: առ այդ, միեւնոյն Լոզանի համաձայնագրի **16րդ յօդուածի համաձայն Թուրքիան կ'ըսէ:-** **Turkey hereby renounces all rights and titles whatsoever over or respecting the territories situated outside the frontiers laid down in the present treaty.**

Սիրելի հայրենակիցներ, ինչ որ խօսքիս ընթացքին յիշեցի հինգ միջազգային օրէնքներու, եւ նոյն ինքնին, Թուրքիոյ հաստատումով, Նախագահ Ուիլսընի իրաւարար վճռագրով, արձակուած Նոյեմբեր 22, 1920 թուականին, Պիթլիսի, Վանի, Էրզրումի եւ Տրապիզոնի շրջաններէն 40,000 քառ.մղոն հողատարածքը կը պատկանի Հայաստանին եւ հայ ժողովուրդին: ատոր ամէնէն ցայտուն փաստը հետեւեալն է:-

2009 թուականին, Հայաստանն ու Թուրքիան փոօթօքոլ ստորագրեցին. որուն յօդուածներէն մէկը կը խօսեր ներկայ սահմաններուն մասին Հայաստանի եւ Թուրքիոյ, . երբ այդ փոօթօքոլները Հայաստանի Հանրապետութեան Նախագահը , Հայաստանի Սահմանադրական դատարան յլեց վերջնականացնելու զայն. ուրեմն, հայաստանի սահմանադրական դատարանը հինգ բացատրութիւններ տուաւ, որոսմէ մէկը, սահմաններուն հարցին վերաբերեալ էր, ուր կ'ըսեր: «մենք համաձայն ենք այն սահմաններուն որոնք միջազգային օրէնքով կը կառուարուին». այդ գրութեան վրայ, Թուրքիան իր ստորագրած փոօթօքոլը մինչեւ այսօր չէ յանձնած իր փառլամէնթին, վաւերացնելու համար. ինչու ? որովհետեւ հաստատ գիտէ եթէ վաւերացնէ, այդ կը նշանակէ, ճանչցաւ Նախագահ Ուիլսընի սահմանագիծը:

Սիրելի հայրենակիցներ, Հիմա ձեզ պիտի հարցնեմ եւ ձեր պատասխանը պիտի ուզեմ լսել:- կրնաք պատկերացնել

ամբողջական Հայաստան մը առանց Պիթլիսի?

Կրնաք պատկերացնել ամբողջական Հայաստան մը առանց Վանի?

Կրնաք պատկերացնել ամբողջական Հայաստանը առանց

Համշէն-Տրապիզոնի?

Կրնաք Պատկերացնել ամբողջական Հայաստան մը առանց

Էրզրումի?

Յաւետ ապրի ազգս հայոց.

Փառք վերածնունդ Հայ ժողովուրդին

